





**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ**

**БИОБИБЛИОГРАФИЯ
АРМЯНСКИХ ИСКУССТВОВЕДОВ
N 8**

ИРИНА ДРАМПЯН

**Предисловие
доктора искусствоведения, профессора
Анны Асатрян**

**ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
2019**

**NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS**

**BIOBIBLIOGRFY OF ARMENIAN ART CRITICS
N 8**

IRINA DRAMPYAN

**Introduction by
Doctor of Arts, Professor Anna Asatryan**

**YEREVAN
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2019**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
N 8**

ԻՐԻՆԱ ԴՐԱՄԲՅԱՆ

Ներածականը՝

**արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աննա ԱՍԱՏՐՅԱՆԻ**

**ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019**

ՀՏԴ 01:7.03
ԳՄԴ 91.9:85
Դ 854

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Արարատ Աղասյան

Մատենագիտությունը կազմել է
արվեստագիտության թեկնածու **Մարգարիտա Քամայանը**

Դ 854 Իրինա Դրամբյան: Կենսամատենագիտություն (կազմ.՝ Մարգարիտա Քամայան).- Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, 44 էջ:

Մատենագիտությունն ընդգրկում է Ի. Դրամբյանի՝ 1964-2019 թվականների տպագիր աշխատանքների ցանկը՝ նրա գիտական գործունեությունը բնութագրող համառոտ ակնարկով:

ՀՏԴ 01:7.03
ԳՄԴ 91.9:85

ISBN 978-5-8080-1402-2
© Ի. Դրամբյան, 2019
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019

ԻՐԻՆԱ ԴՐԱՄՔՅԱՆ. ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

Լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր Իրինա Դրամբյանի ծննդյան հոբելյանը: Ծնվել է 1939-ի օգոստոսի 24-ին Երևանում՝ անվանի արվեստաբան, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի կերպարվեստի թանգարանի (ներկայումս՝ Հայաստանի ազգային պատկերասրահ) ստեղծող և առաջին տնօրեն, ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի և կիրառական արվեստների բաժինների առաջին վարիչ Ռուբեն Գրիգորի Դրամբյանի ընտանիքում:

1957-ին ավարտելով Երևանի Վ. Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցը՝ Ի. Դրամբյանն ընդունվում է Լենինգրադի Ի. Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտ, որն ավարտում է 1963-ին՝ «կերպարվեստի պատմություն և տեսություն» մասնագիտությամբ և նշանակում ստանում ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնում՝ որպես կրտսեր գիտաշխատող և մասնագիտանում հայ միջնադարյան մանրանկարչության հարցերի հետազոտության մեջ՝ ուսումնասիրության համար ընտրելով ուշ շրջանի փայլուն նկարիչ Հակոբ Զուղայեցու արվեստը:

1965-1968-ին Ի. Դրամբյանն ուսումնառությունը շարունակում է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արտասահմանյան արվեստի ամբիոնի ասպիրանտուրայում՝ ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ, արվեստի ականավոր պատմաբան, բյուզանդական, հինռուսական և արևմտաեվրոպական արվեստների 20-րդ դարի խոշորագույն մասնագետներից մեկի, արտասահմանյան յոթ ակադեմիաների պատվավոր անդամ Վիկտոր Լազարևի ղեկավարությամբ:

Աշխատանքը նման ականավոր գիտնականի ղեկավարությամբ, առհասարակ նրա հետ շփումը, նրա հարուստ գրադարանից օգտվելը և մանրագնին ուսումնասիրությունը նրա աշ-

խատությունների, որոնք հայ երիտասարդ արվեստաբանի համար հետագայում դարձան էտալոնային՝ միջնադարյան արվեստագիտության ասպարեզում, մեծապես պայմանավորեցին սեփական հետազոտությունների ուղղությունը:

Լինելով Վ.Ն. Լազարևի սանը՝ Ի. Դրամբյանն իր աշխատանքներում հետևում է արվեստի հետազոտության վերջինիս մեթոդաբանությանը, որը նա ձևակերպեց մասնավորապես 1967 թվականին Մոսկվայի պետական համալսարանի «Լոմոնոսովյան ընթերցումների» իր զեկուցման մեջ. «Արվեստի ժամանակակից պատմաբանի մեթոդաբանության մեջ, ով ամենից առաջ պիտի լինի իր նյութի գիտակը, ձևի վերլուծությունը պետք է անբաժան լինի բովանդակության վերլուծությունից: Եվ այստեղ արվեստի պատմաբանը չի կարող անտեսել ո՛չ պատկերագրությունը, ո՛չ պատկերաբանությունը, ո՛չ տեխնիկան, ո՛չ հնագրությունը: Նա պետք է լինի մի քիչ բանասեր, պետք է իմանա պատմություն և այն որոշակի սոցիալական միջավայրը, որի պայմաններում էլ ստեղծվել է հետազոտվող հուշարձանը: Նա պետք է քաջածանոթ լինի դարաշրջանի առաջատար գաղափարներին, անկախ նրանից՝ մարմնավորվե՞լ են, արդյոք, դրանք կերպարվեստի, գրականության, փիլիսոփայության կամ գիտության միջոցներով»¹:

Եվ պատահական չէր, որ երբ 1976 թ. փետրվարի 1-ին Մոսկվայում իր երկրային կյանքն ավարտեց ականավոր գիտնականը, Երևանում հրատարակվող «Սովետական արվեստի» 1977 թվականի 1-ին համարում հայ արվեստաբանների անունից հիշատակի խոսք ասաց հենց ինքը՝ հայազգի ականավոր գիտնականի հայ խոստումնալից սանը՝ Իրինա Դրամբյանը: «Արվեստաբանը, գիտնականը» խորագրով մահախոսականում հայ ընթերցողի համար նա ուրվագծեց մեծ գիտնականի դիմանկարը՝ մասնավորապես ընդգծելով Վ.Ն. Լազարևի վերաբերմունքը հայ արվեստի և հայ արվեստաբանության հանդեպ: Թեև հայ արվեստը չի եղել Լազարևի գիտական հրապուրանքի հիմնա-

¹ **Лазарев В.Н.** Русская средневековая живопись. Статьи и исследования, Москва, “Наука”, 1970, стр. 313.

կան առարկաներից մեկը, բայց և այնպես միշտ գրավել է նրա սևեռուն ուշադրությունը, և հայ արվեստի ուսումնասիրության բնագավառում նա մեծ ծառայություններ ունի: Լազարևն առաջին հետազոտողներից էր, ով ապացուցեց, «որ պատմական զարգացման մի շարք փուլերում Հայաստանը առաջատար դեր է խաղացել» և որ «հայկական ճարտարապետությունը որոշակի ազդեցություն է ունեցել բյուզանդական և ռոմանական ոճերի ձևավորման վրա»: Նա էր, որ դեռևս Լ. Դուռնովոյից և Ս. Տեր-Ներսեսյանից առաջ այն միտքը հայտնեց, որ Էջմիածնի Ավետարանի վերջնադիր մանրանկարներն արել է ոչ թե սիրիացի վարպետ, այլ հայ նկարիչ: Նա քաջաձանոթ էր հայ արվեստաբանների՝ Գ. Հովսեփյանի, Ռ. Դրամբյանի, Լ. Դուռնովոյի, Ս. Տեր-Ներսեսյանի հետ: Մեծ հարգանքով ու ջերմությամբ էր նա արտահայտվում, մասնավորապես, Գարեգին Հովսեփյանի՝ որպես գիտնականի ու վառ անհատականության, մասին և ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի աշխատակիցներ Իրինա Դրամբյանի և Նիկոլայ Քոթանջյանի խնդրանքով համաձայնեց հոդված գրել վերջինիս մասին, ինչը, ավա՛ղ, չհասցրեց: «Լինելով խոշոր գիտնական,- նկատում է Ի. Դրամբյանը,- նա միաժամանակ խիստ պարզ ու հասարակ էր իր հարաբերություններում՝ երբեք բարձրից չէր նայում իր աշակերտներին, լուրջ ու ուշադիր կարդում էր երիտասարդ գիտնականների գործերը, ու թեև խիստ էր, բայց բարյացակամ»²:

Ավարտելով ասպիրանտուրան՝ Ի. Դրամբյանը 1968-ին վերադառնում է Երևան և այդ ժամանակվանից մինչ օրս՝ ավելի քան հինգ տասնամյակ, ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում շարունակում է զբաղվել հայ միջնադարյան արվեստի ուսումնասիրությամբ՝ կենտրոնանալով զարգացած միջնադարի հայ կերպարվեստի պատմության հարցերի հետազոտության վրա, ինչն ընթանում է երկու ուղղություններով՝ մանրանկարչություն և որմնանկարչություն:

² **Դրամբյան Ի.**, Արվեստաբանը, գիտնականը (Վ.Ն. Լազարևի հիշատակին), «Սովետական արվեստ», 1977, №1, էջ 58:

1971-ին Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանում Ի. Դրամբյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա՝ «Մանրանկարիչ Հակոբ Զուղայեցու արվեստը» թեմայով և ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան:

1981-ին Ի. Դրամբյանն ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատողի պաշտոնում: 1999-ին նա ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդում պաշտպանում է դոկտորական դիսերտացիա «Թորոս Ռոսլինը և ծաղկման շրջանի կիլիկյան գրքարվեստը» թեմայով և ստանում արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան:

2005-2015 թվականներին Ի. Դրամբյանը եղել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իսկ 2015 թվականին որակավորվել է որպես գլխավոր գիտաշխատող:

Տարիներ շարունակ Ի. Դրամբյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի և Արվեստագիտության գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ է:

Ի. Դրամբյանը Հայաստանի նկարիչների միության անդամ է (1972-ից), 2003-ին ընդգրկվել է *International who's who of professional and business women* հանրագիտարանում:

Լայն ու ընդգրկուն են արվեստաբանական կրթության փայլուն դպրոց անցած հետազոտողի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Նրան հավասարապես զբաղեցրել են թե՛ հայ միջնադարյան մանրանկարչության (մասնավորապես XII-XIII դարերի կիլիկյան) և թե՛ մոնումենտալ գեղանկարչության (հիմնականում XIII դար), թե՛ ուշ միջնադարյան և XIX դարի – XX դարի սկզբի հայկական կիրառական արվեստի ուսումնասիրության խնդիրները:

Արվեստաբանն անդրադարձել է արդի հայ նկարիչների ստեղծագործության հետազոտությանը ևս:

Նրա տպագիր աշխատությունների թվում են միջնադարյան առանձին վարպետների ստեղծագործության և արվեստի՝ գրքարվեստի և մոնումենտալ արվեստի առանձին հուշարձանների մենագրական ուսումնասիրություններ, միջնադարյան հայ

արվեստին՝ ամենից առաջ՝ կիլիկյան մանրանկարչությանը նվիրված բաժիններ և XVIII-XIX դարերի Հայաստանի կիրառական արվեստի մասին գլուխներ, բաժիններ հայկական գրքարվեստի վերաբերյալ Մատենադարանի հավաքածուի հիման վրա ստեղծված մի շարք ընդհանուր հրատարակություններում:

Ի. Դրամբյանի գիտական գործունեությանը բնորոշ է, որ նա անդրադառնում է այն վարպետների ստեղծագործությանն ու գեղանկարչության այն նմուշներին, որոնք գրավում են նրան իրենց գեղարվեստական կողմով: Եվ պարտադիր չէ, որ դրանք լինեն հասարակության բարձր խավերի համար ստեղծված նրբագեղ նմուշներ: Նրան առաջին հերթին գրավում են հետազոտվող նմուշների գեղարվեստական բովանդակության խորությունն ու գեղարվեստական արտահայտչականությունը: Եվ պատահական չէ, որ նրա ուսումնասիրություններում նշանակալի տեղ են գրավում առանձին ստեղծագործությունների գեղարվեստական լեզվի վերլուծությունը և հայ արվեստի պատմության այս կամ այն ժամանակաշրջանի գեղարվեստական միտումների բնութագրումը:

Առաջին նկարիչը, ում անդրադարձավ երիտասարդ արվեստաբանը, XVI և XVII դարերի սահմանագլխին ապրած Հակոբ Զուղայեցին էր³: Թեև նրա ստեղծագործությունը ոմանց կարող էր թվալ կոպտավուն, սակայն նրա արվեստում արվեստաբանին գրավեց վարպետի ստեղծագործության գեղանկարչական, գունային կողմը. նրա աշխատանքները շատ արդիական են նորագույն շրջանի նկարիչների ստեղծագործական որոնումների համար: Ականավոր ծաղկողի ստեղծագործության ուսումնասիրության մեջ հառնում է պատմական ֆոնը, որի վրա զարգացել է նրա գեղարվեստական գործունեությունը. նրա ձեռագրերի հիշատակարանների ուսումնասիրության հիման վրա հայտնաբերվել են վարպետի կենսագրության հիմնական տեղեկությունները, որոշվել են ձեռագրական կենտրոնները, որտեղ

³ **Դրամբյան Ի.** Առաջին նկարիչը, ում անդրադարձավ երիտասարդ արվեստաբանը, XVI և XVII դարերի սահմանագլխին ապրած Հակոբ Զուղայեցին էր³: Թեև նրա ստեղծագործությունը ոմանց կարող էր թվալ կոպտավուն, սակայն նրա արվեստում արվեստաբանին գրավեց վարպետի ստեղծագործության գեղանկարչական, գունային կողմը. նրա աշխատանքները շատ արդիական են նորագույն շրջանի նկարիչների ստեղծագործական որոնումների համար: Ականավոր ծաղկողի ստեղծագործության ուսումնասիրության մեջ հառնում է պատմական ֆոնը, որի վրա զարգացել է նրա գեղարվեստական գործունեությունը. նրա ձեռագրերի հիշատակարանների ուսումնասիրության հիման վրա հայտնաբերվել են վարպետի կենսագրության հիմնական տեղեկությունները, որոշվել են ձեռագրական կենտրոնները, որտեղ

նա սովորել է, և այն քաղաքները, որտեղ նա հետագայում աշխատել է: Քննության են առնվել նրա մանրանկարների՝ երբեմն ինքնատիպ պատկերագրական առանձնահատկությունները, և հեղինակի համար սովորականի պես նշանակալի տեղ է հատկացված Հակոբ Ջուղայեցու արվեստի գեղարվեստական առանձնահատկությունների վերլուծությանը, որոնց մեջ առաջատար դերը պատկանում էր բացառիկ արտահայտիչ գույնին: Հեղինակի մենագրական մյուս հրատարակությունների նման այս գիրքը ևս օժտված է նկարչի աշխատանքների մանրամասն գիտական կատալոգով (գրացանկով):

Այնուհետև Ի. Դրամբյանը խորացել է միջնադարյան հայ մանրանկարչության առավել փայլուն բաժիններից մեկի՝ կիլիկյան արվեստի ուսումնասիրության մեջ և զբաղվել այդ արվեստի ուսումնասիրությամբ ավելի քան 35 տարի՝ սկսած 1970-ականների կեսերից մինչև 2000-ական թվականների առաջին տասնամյակը: Ու թեև կիլիկյան մանրանկարչությամբ զբաղվել էին այնպիսի խոշոր գիտնականներ, ինչպիսիք էին Լ. Դուռնովոն, Ս. Տեր-Ներսեսյանը, Գ. Հովսեփյանը և Ռ. Դրամբյանը, նա գտավ հետազոտության նոր, սեփական դիտակետը: Դա և՛ ընդհանուր, տեսական հարցերն էին, ինչպես կիլիկյան մանրանկարչության գեղարվեստական հիմունքները⁴, և՛ XIII դ. կիլիկյան մանրանկարչության ոճի⁵ և նրա էվոլյուցիայի⁶ հիմնախնդիր-

⁴ Художественные основы миниатюрной живописи киликийского армянского государства. Доклад на Лазаревских чтениях, Московский государственный университет, Москва, 1982. Художественные основы киликийской книжной живописи. “Советское искусствознание” – 22, Москва, 1987, стр. 108-122.

⁵ Sur le problème du style artistique de la miniature cilicienne du XIII-e siècle. Atti del terzo Simposio internazionale di Arte Armena. San Lazzaro, Venezia, 1984. Искусство Тороса Рослина и вопрос его связи с византийской живописью (К проблеме художественных основ киликийской живописи). Հայ արվեստի հանրապետական 7-րդ գիտական կոնֆերանս, Երևան, 1995, զեկուցումների թեզեր, էջ 76-77.

⁶ L'evoluzione dello stile miniatura ciliciana nel XIII secolo. Terso Simposio

րը: Դա նաև հետազոտությունն էր որոշակի ձեռագրերի և առանձին վարպետների ստեղծագործության, որոնց շարքում կենտրոնական տեղը հատկացվում էր կիլիկյան խոշորագույն մանրանկարիչ Թորոս Ռոսլինին՝ նրա կենսագրությանը⁷, ստեղծագործության վաղ շրջանին⁸, ատրիբուցիայի պրոբլեմներին⁹, վարպետի արվեստի գեղարվեստական առանձնահատկություններին ու գեղարվեստական լեզվի առանձնահատկություններին¹⁰ և գեղարվեստական նորամուծություններին, որ նա ներմուծեց արվեստ¹¹, նրա մանրանկարչության մեջ մարդու կերպարին¹² և նրա ձեռագրերում խորանների ձևավորման գեղարվեստական համակարգին¹³ և, վերջապես, Թորոս Ռոսլինի ար-

Internazionale di Arte Armena, Milano-Vicenza-Venezia, 1981.

⁷ Թորոս Ռոսլին. կյանքն ու արվեստը, «Պատմաբանասիրական հանդես», 2011, № 1, էջ 187-205:

⁸ Première période de l’Oeuvre de Thoros Roslin. Atti del Quinto Simposio Internazionale di Arte Armena. Venezia, 1988, p. 333-339.

⁹ Об одном киликийском Евангелии круга Тороса Рослина. Сборник докладов II Международного симпозиума по армянскому искусству, Ереван, 1978, т. IV, стр. 58-66.

¹⁰ Художественные особенности искусства Тороса Рослина (миниатюры Малатийского Евангелия). Древнерусское искусство. Рукописная книга”, Сборник третий, Москва, 1983, стр. 331-341; К вопросу о художественном языке живописи Тороса Рослина. «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Երևան, 2000, стр. 279-294.

¹¹ Художественные новшества в искусстве Тороса Рослина и его преемников. Тезисы докладов IV международного симпозиума по армянскому искусству, Институт искусств АН Армении, Ереван, 1985, стр. 112-114.

¹² Образ человека в искусстве Тороса Рослина. “Византия. Русь. Западная Европа. Искусство и культура”. Конференция, посвященная 100-летию со дня рождения профессора В.Н. Лазарева. Московский университет, Всесоюзный Институт искусствознания. Москва, 1997.

¹³ Художественная система оформления канонных согласия в рукописях Тороса Рослина. Ռուբեն Դրամբյանի (1891-1991) հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզեր, Երևան, 1996, էջ 18-20:

վեստի ուսումնասիրության հիմնահարցերին¹⁴:

Թորոս Ռոսլինի ստեղծագործության ուսումնասիրության հետ սերտորեն կապված է և նրան հաջորդող սերնդի վարպետների արվեստի ուսումնասիրությունը, որին նվիրվեցին մի շարք հրապարակումներ¹⁵ և առաջին հերթին Մատենադարանի առավել նշանավոր ձեռագրերից մեկի՝ Հեթում Բ արքայի 1286թ. Ճաշոցի համակողմանի մենագրական ուսումնասիրությունը¹⁶:

Այդ բազմամյա հետազոտությունների տրամաբանական արդյունքը դարձան Ի. Դրամբյանի «Թորոս Ռոսլինը և ծաղկման շրջանի կիլիկյան մանրանկարչությունը» թեմայով դոկտորական ատենախոսությունը և դրան հաջորդող մենագրական երկու հրատարակությունները՝ «Թորոս Ռոսլին» (ռուսերեն)¹⁷ և «Հեթում Բ արքայի Ճաշոցը (1286 թ. Հայկական նկարազարդ մատյանը)»¹⁸:

¹⁴ К проблемам изучения искусства Тороса Рослина. «Պատմաբանասիրական հանդես», 1997, № 1, стр. 227-240.

¹⁵ О группе малоизвестных киликийских армянских рукописей 90-х гг. XIII века. Доклад на конференции Всесоюзного Института искусствознания: “Древнерусское искусство. Новые открытия. Атрибуции”. Москва, 1985. Киликийские иллюстрированные рукописи эпохи расцвета в собрании Матенадарана (история собирательства, хранения и изучения). Доклад на конференции “Мероприятия советской власти по изучению, сохранению и реставрации памятников средневекового искусства”, Всесоюзный Институт искусствознания, Москва, 1987.

¹⁶ Տե՛ս Լекционарий 1286 года киликийского царя Этума II. Альманах “Музей” - 7, Москва, 1987, стр. 147-159. Հայկական Ճաշոցի նկարազարդման գեղարվեստական սկզբունքները, Հայ արվեստի հարցեր, Գիրք 1, Երևան, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հրատարակչություն, 2006, էջ 105-115:

¹⁷ Торос Рослин. Ереван, “Тигран Мец”, 2000, 36 п.л.+2 л. цв. вкл.+2 печ. л. ч.-б. вкл.

¹⁸ Հեթում Բ արքայի Ճաշոցը (1286 թ. Հայկական նկարազարդ մատյանը), Երևան, «Նաիրի», 2004, 168 էջ, 24 թ. նկ.: Лекционарий царя Этума II (Армянский иллюстрированный кодекс 1286 года). Ереван, “Наири”, 2004; Lectionary of King Hetum II (Armenian illustrated codex of

Ի. Դրամբյանը մասնակցել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի պատկերազարդ ձեռագրերին նվիրված մի շարք աշխատությունների հրատարակմանը, որոնք գրվել են Մատենադարանի աշխատակիցների հետ համահեղինակությամբ: Դրանցից է Մատենադարանի հավաքածուի մասին ամենաառաջին գրքերից մեկը՝ Մոսկվայի “Искусство” հրատարակչությունում «Աշխարհի քաղաքներն ու թանգարանները» մատենաշարով լույս տեսած “Художественные сокровища Матенадарана”¹⁹, որտեղ կենդանի ձևով, պատմական ֆոնի վրա ներկայացված են Պահոցի հավաքածուի առավել նշանավոր ձեռագրերը, դրանք զարդարող մանրանկարները, կազմերն ու կազմաստառները:

Հետագայում՝ տարբեր տարիների, Լենինգրադում՝ “Аврора” հրատարակչությունում և Երևանում՝ «Նաիրի» հրատարակչությունում, լույս տեսան Մատենադարանի հավաքածուի՝ հայ մանրանկարչությանը նվիրված երեք ալբոմները, որոնցում անվանի հայագետն ամեն անգամ նոր տեքստերով հեղինակել է Կիլիկյան Հայաստանի մանրանկարչությանը նվիրված բաժինները²⁰:

Ի. Դրամբյանը պարբերաբար զբաղվել է նաև դեկորատիվ-կիրառական արվեստով՝ ձեռագրերի կազմերով և կազմաստառներով, ինչպես նաև դրա մյուս տեսակներով: Այսպես, նա է հեղինակել Հայաստանի XVII դարի - XIX դարի սկզբի դեկորատիվ-կիրառական արվեստին նվիրված տեքստերը ԽՍՀՄ ժողովուրդների արվեստի վերաբերյալ Արվեստի պատմության և

1286 A.D.). Yerevan, “Nairi”, 2004:

¹⁹ **Драмбян И., Корхмазян Э.** Художественные сокровища Матенадарана. Москва, “Искусство”, 1976, 175 стр. с илл.

²⁰ Armenian Miniatures of the 13th and 14th centuries from the Matenadaran collection (E. Korkhmazian, I. Drampian, G. Akopian). Leningrad, Aurora art publishers, 1984; La Miniature arménienne (L. Zakarian, I. Drampian, E. Korkhmazian, H. Hacopian). Erevan, «Nairi», 2006; Армянская миниатюра. Коллекция Матенадарана (Л. Закарян, И. Драмбян, Э. Корхмазян, Г. Акопян). Ереван, «Наири», 2007.

տեսության ինստիտուտի բազմահատոր հրատարակության համար²¹:

Ծանրակշիռ է Ի. Դրամբյանի վաստակը մոնումենտալ գեղանկարչության ուսումնասիրության գործում: Շուրջ 20 տարիների ընթացքում՝ 1970-ականներից մինչև 1980-ականների վերջերը, Ի. Դրամբյանը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, նկարիչ և արվեստաբան Նիկոլայ Քոթանջյանի հետ հետևողականորեն ուսումնասիրել է Խորհրդային Հայաստանի տարածքում գտնվող վաղ և զարգացած միջնադարի հայկական եկեղեցիների պահպանված որմնանկարները, հավաքել հարուստ ֆոտոնյութ, որի արժեքն աճում է, քանզի ժամանակի ընթացքում վատթարանում է որմնանկարների պահպանվածության վիճակը:

1979-ին լույս տեսավ հայագետի հետազոտությունը՝ նվիրված միջնադարյան հայ մոնումենտալ գեղանկարչության նշանավոր հուշարձաններից մեկին՝ XIII դարի վերջին քառորդում ստեղծված Քոբայր վանքի որմնանկարներին, որոնք, իրավամբ, հայ արվեստի նշանակալի ստեղծագործություններից են, Խորհրդային Հայաստանի տարածքում միջնադարյան որմնանկարչության լավագույնս պահպանված նմուշներից:

Մասնագետներին սակավ հայտնի, իսկ արվեստի սիրահարներին լիովին անհայտ այդ հուշարձանը Ի. Դրամբյանի ջանքերով փաստորեն հրատարակվեց առաջին անգամ, ինչը խիստ հրատապ էր ու արդիական, քանի որ, ինչպես նկատում է Պարույր Մուրադյանը. «Եթե Քոբայրի որմնանկարների ուսումնասիրությունը դարձյալ ուշանար, ապա անկարելի պիտի դառ-

²¹ **Драмбян И.** Группа армянских серебряных окладов XVII-XVIII вв. «Հայագիտական հետազոտություններ», պրակ Ա, Երևանի համալսարանի հրատ., 1974, էջ 130-135. **Драмбян И.** Два образца армянских лицевых тканей с христологическими изображениями на форзацах двух рукописей из собраний Матенадарана и Иерусалимского патриархата. «Լեւոն Խաչիկեան. Հարիրամեակ» ժողովածու, Երեւան, 2019. **Драмбян И.** Разделы в IV, V, VI томах многотомника “Искусство народов СССР”, Москва, “Изобразительное искусство”, 1976, 1979, 1981.

նար ավանդատան պահպանված պատառիկները ճանաչելու հնարավորությունը»²²:

Քոբայրի մասին գրքում և նրա որմնանկարներին նվիրված երկու հոդվածներում²³ Ի. Դրամբյանը ճշտել է փոքր եկեղեցու թվագրումը, բացահայտել, որ կտիտորական դիմանկարում պատկերված են Ջաքարյանների տոհմի հայ իշխանները՝ Ջաքարե Երկայնաբազուկի որդի Շահնշահը և նրա կինը: Բանավիճելով ֆրանսուհի հետազոտող Ն. Թիերրիի հետ, ով փորձում էր հուշարձանը վերագրել վրացական արվեստին, նա պատկերագրական և ոճական վերլուծության հիման վրա, համոզիչ ապացուցեց այդ որմնանկարների պատկանելությունը հայ վարպետներին:

Ջուտ ակադեմիական նշանակությունից բացի, աշխատությունն ունի գործնական ուղղվածություն. «Ուզում եմ հավատալ, գրում է հեղինակը, - որ Քոբայրի որմնանկարների հրատարակումը իր վրա կիրավիրի հուշարձանների պահպանության կոմիտեի ուշադրությունը և կարագացնի XIII դարի գեղանկարչության այդ հրաշալի հուշարձանի փրկության համար միջոցառումների ձեռնարկումը»²⁴:

Ն. Քոթանջյանի հետ համահեղինակությամբ բազմալատակ արվեստաբանը գրել է երկու հոդված՝ Անիի Տիգրան Հոնենցի եկեղեցու և Տաթևի որմնանկարների մասին²⁵, իսկ

²² **Մուրադյան Պ.**, Քոբայրի որմնանկարները, «Սովետական Հայաստան», 12 սեպտեմբերի, 1979:

²³ **Драмбян И.** Фрески Кобайра. Ереван, “Советакан грох”, 1979; **Драмбян И.** Фрески Большой церкви монастыря Кобайр. “Кавказ и Византия”, выпуск 1, Ереван, Издательство АН Арм.ССР, 1979, стр. 142-154; **Драмбян И.** К вопросу о датировке и интерпретации фресок Кобайра. “Кавказ и Византия”, выпуск 4, Ереван, Издательство АН Арм.ССР, 1984, стр. 194-217.

²⁴ **Драмбян И.** Шедевр средневековья. «Գրքերի աշխարհ», 15 հունիսի, 1979:

²⁵ **Irina Drampian, Nikolai Kotanjian.** The Frescoes in the Church of St.Gregory the Illuminator Founded by Tigran Honents in Ani. “Armenian

2018 թ. «Սանկտ Պետերբուրգի համալսարանի տեղեկագրում» հրատարակվեց Հայաստանի միջնադարյան մոնումենտալ գեղանկարչության ուսումնասիրության պատմության վերաբերյալ Ի. Դրամբյանի հետահայաց հոդվածը²⁶:

Ի. Դրամբյանի գիտական խմբագրությամբ լույս են տեսել մի շարք գրքեր: Նրա ջանքերով Հակոբ Հովնաթանյանի ծննդյան 200-ամյա հոբելյանի կապակցությամբ 2006-ին պետական պատվերի շրջանակներում լույս տեսավ հայ հանճարեղ նկարչի մասին Ռուբեն Դրամբյանի արժեքավոր մենագրությունը²⁷: Ուսումնասիրություն, որի առաջին տարբերակը Ռ. Դրամբյանն ավարտել էր արդեն իսկ 1930-ականների վերջին և որի վրա աշխատեց իր ողջ կյանքի ընթացքում:

Ի. Դրամբյանը հեղինակ է Հայաստանում և արտերկրում հրատարակված բազմաթիվ գիտական և հանրագիտարանային հոդվածների: Ձեկուցումներով հանդես է եկել հայ արվեստին նվիրված միջազգային սիմպոզիումներում՝ Իտալիայում և Երևանում, ինչպես նաև Բուլղարիայում, Հունաստանում, Ռուսաստանում՝ Մոսկվայում և Լենինգրադում, ՀՀ ԳԱԱ միջազգային և հանրապետական մի շարք գիտաժողովներում:

Նշանակալի է վաստակաշատ արվեստաբանի ավանդը հայ կերպարվեստագիտության մեջ անջնջելի հետք թողած իր ավագ գործընկերների հիշատակի հավերժացման, նրանց վաստակի գնահատման ու արժևորման գործում: Այսպես՝ 1973 թվականի հունիսի 5-6-ին Մատենադարանի նիստերի դահլի-

Review”, Watertown, Massachusetts, 1990, volume 43, number 4/172; p.41-57; **Николай Котанджян, Ирина Драмбян**. Фрески Татева. Судьба росписи и история ее изучения. Հայ արվեստի հարցեր, Գիրք 5, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013, էջ 283-316; **Քոթանջյան Ն., Դրամբյան Ի.**, Տաթևի որմնանկարները, «Էջմիածին», 2013, Ը, էջ 8-32:

²⁶ **Драмбян И.** К истории изучения средневековой армянской фресковой живописи. Вестник Санкт-Петербургского университета. Искусствоведение. т. 8, выпуск 2, Санкт-Петербург, 2018, стр. 232-257.

²⁷ **Драмбян Р.** Акоп Овнатанян. Ереван, 2006, 150 стр. + 86 илл.

ճում նրա նախաձեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ գումարվեց ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Մատենադարանի համատեղ գիտական միջոցառումներից մեկը՝ հայկական միջնադարյան կերպարվեստի հուշարձանների գիտական ուսումնասիրության և պահպանության գործում խոշոր ավանդ ունեցած Լիդիա Դուռնովոյի մահվան 10-ամյա տարելիցի կապակցությամբ կազմակերպված ու նրա հիշատակին նվիրված գիտական նստաշրջանը²⁸:

Ու միանգամայն տրամաբանական էր, որ երբ 2016 թ. լրացավ Լ.Ա. Դուռնովոյի ծննդյան 130-ամյակը, «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրությունը դիմեց հենց Իրինա Դրամբյանին՝ հեղինակելու մեծավաստակ գիտնականին նվիրված հոդվածը²⁹:

Հոդվածում արժևորվում է հայ միջնադարյան արվեստի խոշորագույն պատմաբաններից՝ Հայաստանում այդ գիտության հիմնադիրներից մեկի գործունեությունը: 1936 թ. Հայաստանի կերպարվեստի թանգարանի տնօրեն Ռ. Դրամբյանի հրավերով Երևան տեղափոխված արվեստաբանը փաստորեն «բացահայտեց» հայ որմնանկարչությունը և գրեց Հայաստանի միջնադարյան արվեստի այդ կարևորագույն ոլորտին նվիրված առաջին ուսումնասիրությունը, հրատարակեց հայ գրքարվեստի առաջին (ապա և երկրորդ) ալբոմները, կազմեց հայկական դաջարվեստի ու զարդարվեստի ալբոմները և Հայաստանում առաջինը գրեց աշխատություն՝ նվիրված հայ միջնադարյան կերպարվեստի պատմությանը:

1996 թվականի հուլիսին Ի. Դրամբյանը կազմակերպեց վաստակաշատ գիտնական, արվեստի պատմաբան և գեղարվեստի քննադատ Ռուբեն Դրամբյանի հիշատակին նվիրված գիտաժողովը՝ այս անգամ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և

²⁸ Նստաշրջանի մասին տե՛ս **Հակոբյան Հ.**, Գիտական նստաշրջան՝ նվիրված Լ.Ա. Դուռնովոյի հիշատակին, «Պատմաբանասիրական հանդես», 1973, № 2, էջ 317-318:

²⁹ **Драмбян И.** Лидия Александровна Дурново (к 130-летию со дня рождения). «Պատմաբանասիրական հանդես», 2016, № 1, էջ 79-90:

Հայաստանի ազգային պատկերասրահի հետ համատեղ: Գիտաժողովի շրջանակներում հրատարակվեց զեկուցումների թեզերի ժողովածուն³⁰, Հայաստանի ազգային պատկերասրահում բացվեց ռուսական արվեստի ցուցահանդեսը:

2016 թվականին լրացավ Ռուբեն Դրամբյանի ծննդյան 125-ամյա հոբելյանը: Ինչպես նշել է Արարատ Աղասյանը հոբելյանի կապակցությամբ «Պատմաբանասիրական հանդեսում» լույս տեսած «Հայ արվեստագիտության դրոշակակիրը» հոդվածում. «...ծանրակշիռ ու նշանակալից է Ռ. Դրամբյանի ներդրումն ինչպես հանրապետությունում թանգարանային գործի կազմակերպման բնագավառում, այնպես էլ հայ արվեստաբանական մտքի ձևավորման ու զարգացման ասպարեզում, ինչն իր արտացոլումն է գտել նրա գրքերում և մենագրություններում, հոդվածներում ու զեկուցումներում, Հայաստանի կերպարվեստին նվիրված պատմական ակնարկներում»³¹:

Հոբելյանական միջոցառումների շրջանակում ՀՀ մշակութթի նախարարության, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Հայաստանի ազգային պատկերասրահի նախաձեռնությամբ Հայաստանի ազգային պատկերասրահի որմնանկարների դահլիճում 2016 թ. հոկտեմբերի 5-ին և 6-ին գումարվեց գիտաժողով՝ նվիրված Ռուբեն Դրամբյանի ծննդյան 125-ամյա հոբելյանին: Ի. Դրամբյանի ջանքերով նախապատրաստվեց վավերագրական լուսանկարների ցուցահանդեսը: Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց Ռ. Դրամբյանի հոդվածների սովորաձավալ ժողովածուն³², որը կազմեց,

³⁰ Ռուբեն Դրամբյանի (1891-1991) հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզեր, Երևան, 1996, 45 էջ:

³¹ **Աղասյան Ա.**, Հայ արվեստագիտության դրոշակակիրը (Ռուբեն Դրամբյանի ծննդյան 125-ամյակի առթիվ), «Պատմաբանասիրական հանդես», 2016, № 3, էջ 68:

³² **Рубен Драмбян.** Из истории армянского искусства. Сборник статей, Ереван, 2016, 499 стр.

խմբագրեց և հրատարակության պատրաստեց Ի. Դրամբյանը: Նա հեղինակեց նաև ժողովածուի առաջաբանը³³:

2017 թվականին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս տեսավ «Ռուբեն Դրամբյան – 125» գիտաժողովի զեկուցումների ժողովածուն³⁴, որն սկսվում է Ի. Դրամբյանի «Ռուբեն Դրամբյանի դերը ազգային պատկերասրահի ստեղծման գործում» ծավալուն հոդվածով³⁵: Արվեստաբանն իրավացիորեն նկատում է, որ իր պաշտոնավարության շուրջ երեսուն տարիների ընթացքում Ռ. Դրամբյանը սահմանեց թանգարանի հայեցակարգը, հավաքեց նրա երեք բաժինների հարուստ ֆոնդերը՝ փաստորեն ձևավորելով Հայաստանի ազգային պատկերասրահի հավաքածուի հիմնական կորիզը: Բանախոսը նկատեց. «Ռ. Դրամբյանը մեզ ժառանգություն է թողել գեղարվեստական այնպիսի բարձրարժեք հավաքածու, որը համարվում էր Խորհրդային Միության լավագույն հավաքածուներից մեկը, ինչով մենք լիիրավ կարող ենք հպարտանալ»³⁶:

Ռ. Դրամբյանի դերը հայ թանգարանաշինության գործում գնահատվեց ոչ միայն արվեստի գործիչների, այլև պետության կողմից: Երևան քաղաքի ավագանին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ և Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի առաջարկությամբ առաջին գումարման 2012թ.

³³ **Драмбян И.** Р.Г. Драмбян и его роль в художественной жизни Армении XX века, Предисловие к сборнику статей “**Рубен Драмбян.** Из истории армянского искусства”, Ереван, 2016, стр. VII-XXVIII.

³⁴ Ռուբեն Դրամբյան, Գիտաժողով՝ նվիրված Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնադիր տնօրեն Ռ. Դրամբյանի ծննդյան 125-ամյակին (5-6 հոկտեմբերի, 2016թ.), Ձեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 204 էջ:

³⁵ Տե՛ս **Драмбян И.** Рубен Драмбян и его роль в создании Национальной галереи Армении, Գիտաժողով՝ նվիրված Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնադիր տնօրեն Ռ. Դրամբյանի ծննդյան 125-ամյակին (5-6 հոկտեմբերի, 2016 թ.), Ձեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 3-32:

³⁶Նույն տեղում, էջ 21:

նոյեմբերի 28-ի նիստում միաձայն կողմ քվեարկեց Հայաստանի ազգային պատկերասրահի ճակատային հատվածում Ռ. Դրամբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին որոշման նախագծին: Իսկ ամիսներ անց՝ 2013 թ. հոկտեմբերի 12-ին, «Էրեբունի-Երևան 2795» տոնակատարության շրջանակներում տեղի ունեցավ հուշատախտակի բացման հանդիսավոր արարողությունը (քանդակագործ՝ Գետիկ Բաղդասարյան, ճարտարապետ՝ Լևոն Իգիթյան): Այդպիսով, Պատկերասրահի առաջին ու երկարամյա տնօրենը վերադարձավ իր հարազատ օջախ՝ որպես քարե հյուր: Այդ կապակցությամբ Ի. Դրամբյանն իրենց ընտանեկան հավաքածուից Հայաստանի ազգային պատկերասրահին նվիրաբերեց 20-րդ դարի աշխարհահռչակ նկարիչ Մարկ Շագալի՝ 1915-ին վրձնած «Ամառանոց Ջաղջեում: Ինտերիեր» թանկարժեք կտավը:

Ի. Դրամբյանի նախաձեռնությամբ, նրա ակտիվ ջանքերով, խմբագրությամբ, լրամշակմամբ ու առաջաբանով 2017-ին հետմահու հրատարակվեց հայ միջնադարյան կերպարվեստի խոշոր մասնագետներից մեկի՝ 2013-ին կյանքից հեռացած Նիկոլայ Քոթանջյանի վերջին, անավարտ մնացած «Վաղմիջնադարյան Հայաստանի (IV-VII դարերի) մոնումենտալ նկարչությունը» վերտառությամբ հիմնարար աշխատությունը³⁷: Վաղմիջնադարյան մեր որմնանկարներին ու խճանկարներին նվիրված այս գիրքը պատմական լայն ընդգրկում ունի՝ Հայաստանում քրիստոնեության տարածման և պաշտոնական ընդունման ժամանակներից մինչև արաբական արշավանքները: Հեղինակն անդրադարձել է Հայաստանում մոնումենտալ նկարչության առաջացման խնդրին, մատնանշել դրա ակունքները, ներկայացրել հայ միջնադարյան որմնանկարչության և խճանկարչության ուսումնասիրության պատմությունը, բացահայտել հայ աստվածաբանների մշակած դեկորատիվ ծրագրերի յուրահատկությունները, առանձնացրել գեղարվեստական այն ուղղություններն ու միտումները, որոնց հունով է ընթացել հայ վաղմիջնադարյան

³⁷ **Котанджян Н.** Монументальная живопись раннесредневековой Армении (IV-VII века). Ереван, “Тигран Мец”, 2017, 264 стр., цв. илл. 103.

մոնումենտալ նկարչության զարգացումը, ոճական և պատկերա-
գրական զուգահեռներ անցկացրել այդ ժամանակվա Հայաս-
տանի և քրիստոնեական այլ երկրների արվեստի միջև:

Հայրենիքը բարձր է գնահատել Ի. Դրամբյանի գիտական
վաստակը: 2014 թվականի սեպտեմբերին նրան շնորհվել է ՀՀ
արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում, իսկ դրա-
նից մեկ տարի առաջ՝ 2013 թվականի հոկտեմբերին, նա պար-
գևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության բարձրագույն
պարգևով՝ ոսկե մեդալով:

Այսօր էլ հայ կերպարվեստագիտության առաջատարներից
մեկը՝ Ի. Դրամբյանը, շարունակում է արարել. նա կարգավորում
է Ռուբեն Դրամբյանի արխիվը, հրատարակության պատրաս-
տում նրա հուշագրությունն ու նամականին: Բացի այդ՝ նա կազ-
մում է իր ամուսնու՝ Նիկոլայ Քոթանջյանի գեղանկարչական և
գրաֆիկական աշխատանքների կատալոգը, հրատարակության
պատրաստում նրա “Записки художника” արվեստի մասին
ասույթների ժողովածուն, որի մի մասն արդեն 2018 թվականին
հրատարակվել է Ե. Մուրինայի «Նիկոլայ Քոթանջյանի գեղա-
նկարչությունը» գրքում³⁸: Իսկ հեռանկարում Ն. Քոթանջյանի
կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ մեծ մենագրու-
թյունն է:

Վերստին շնորհավորելով մեր գործընկերոջը հոբելյանի
կապակցությամբ՝ մաղթում ենք քաջառողջ կյանքի երկար տա-
